

**ՊՈՆԶԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ\***

**Սոկրատ Խանյան**

**Քանալի բառեր`** պոեզիա, Հայաստան, Արցախ, ԽՍՀՄ գրողների միություն, ազատագրական պայքար, հայրենասիրություն, կարոտի քնարերգություն, մարտական պոեզիա:

*Արցախի նորագույն շրջանի պոեզիան հայ գրականության անբաժանելի մասն է: Նրանում ի հայտ են եկել գեղարվեստական զարգացման այն բոլոր միտումները, ինչ հատուկ է եղել ամբողջ հայ գրականությանը 20-րդ դարի 2-րդ կեսին:*

*Խորհրդային 70 տարիների ընթացքում Ադրբեջանի ղեկավար շրջաններն ամեն կերպ ջանում էին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ստեղծվող գրականության ձեռքբերումները կապել «Հարազատ» Ադրբեջանական Սոցիալիստական Հանրապետության «հոգատար» վերաբերմունքի, Ադրբեջանի գրողների միության անմիջական «ղեկավարության», ինչպես նաև ազերի-թուրքական գրականության նախահիմքերի և ժամանակակից ավանդույթների օգտագործման հետ: Սակայն Արցախի գրականությունն իր բնույթով ու երանգներով, ինչպես միշտ, նորագույն շրջանում ևս հայ ոգու արտահայտություն է: Արցախի գրողը ստեղծագործական իր խառնվածքով հայ ժողովրդի ստեղծարար ոգու ժառանգորդն է, նրա նորօրյա ոգորումների ու ակնկալությունների արտահայտիչը:*

*Նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ժողովուրդների հասարակական կյանքում որոշակի փոփոխություններ տեղի ունեցան 1950-ական թվականների սկզբից, երբ քննադատվեց անհատի պաշտամունքը: Նշանակալի բեկում եղավ նաև մշակույթի բնագավառում: Գրականությունը թեկուզ դանդաղ, սկսեց ազատվել գաղափարական շրջափակումից նաև Արցախում: Հետևելով մայր Հայաստանում ստեղծվող գրականության նոր ընթացքին` արցախցի գրողները ևս վերանայեցին կյանքի գաղափարական ու գեղագիտական սկզբունքները, ստուգեցին գեղարվեստական իրենց մտածողությունը, ամեն կերպ ջանացին հետևել հայ բազմադարյա հարուստ գրականության ընդհանուր խմորումներին` ձգտելով իրենց նպաստը բերել դրանում:*

*Արցախի գրողների համար տեսական-գործնական լուծումների հիմնական և ուղեցույց աղբյուրը մայր Հայաստանում հարատարակվող թերթերն ու գրքերն էին, ականավոր գրականագետների խոսքը և գրողների գրական հունձքը, Հայաստանի մամուլում հրատարակվող հոդվածները, որոնցում վերանայվում էին հասարակական կյանքի գաղափարական ու գեղագիտական սկզբունքները: Հայաստանի գրողների 3-րդ, ԽՍՀՄ գրողների 2-րդ համագումարներից հետո տպագրված նյութերն աշխուժություն առաջացրին նաև Արցախի գրողների ստեղծագործական կյանքում:*

*Տեսական ու ստեղծագործական բնույթի սխալների քննադատության առողջ ձայնը հասնում էր Արցախ: «Անկոնֆլիկտայնության» տեսության, գրողի անհատականության և քնարական հերոսի, ժամանակի և պոեզիայի հարաբերության, ռեալիզմի նախահիմքերի հաստատման և ժխտման, ազգայինի և համամարդկայինի, ավանդականի և նորարարության հարցերին նվիրած հոդվածներում, գրախոսություններում ու բանա-*

\* Հոդվածն ընդունվել է 15.12.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

վիճային ընդհանրացումներում իրենց ուսանելի խոսքն ասացին ականավոր գրականագետներ Սերգեյ Սարինյանը, Էդվարդ Զրբաշյանը, Սողոմոն Սողոմոնյանը, Հրանտ Թամրազյանը, Սուրեն Աղաբաբյանը, Սևակ Արզումանյանը և այլք:

Գրականության առջև ծառայած նոր խնդիրների շուրջ հանդես եկան նաև ականավոր գրողներ Նաիրի Զարյանը, Գուրգեն Մահարին, Մկրտիչ Արմենը, Պարույր Սևակը, Գևորգ Էմինը, Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Սիլվա Կապուտիկյանը, Հրաչյա Հովհաննիսյանը և ուրիշներ: Արցախի գրողներն ուշի ուշով հետևում էին նրանց ելույթներին, լսում խորհուրդները, ստեղծագործական լիցք ստանում նրանց գրական նվաճումներից:

Դեռևս 1950-ական թվականներին տեսանելի էր Արցախի գրական օջախի ներկայացուցիչների կոլեկտիվ լույսը: Արցախի բանաստեղծները չէին մոռանում հարազատ միջավայրը ներկայացնող անմիջականության մասին: Նրանք ձգտում էին հեռու մնալու նկարագրության տուրիստական ոճից, կեղծ հրետորականությունից, ընդհանուր դատողականությունից: Այդ ժամանակաընթացքում փորձառու գրողների հետ հանդես էին գալիս խոստումնալից բանաստեղծներ Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Արմեն Հովհաննիսյանը, Նվարդ Ավագյանը և ուրիշներ: Ապա հանդես եկան Վարդան Հակոբյանը և նրա սերնդակիցները: Պետք է նշել, որ նրանք հանդես էին գալիս «Գրական Ադրբեջան» հանդեսում, որ հրատարակվում էր 1957 թվականից: 1960-ական թվականներին գրական երիտասարդությունն իր վրա էր սևեռել գրական կազմակերպությունների ու մամուլի ուշադրությունը: Նման վերաբերմունքը թելադրել է Բագրատ Ուլուբաբյանին գրելու իր «Մտորումներ մեր երիտասարդ գրականության մասին» տեսական-քննադատական հոդվածը<sup>[1]</sup>: Բանն – այն էր, որ յուրահատուկ պայմաններում էր աճում Արցախի գրականությունը: Դա դժվար առաքելություն էր, որովհետև Արցախի գրականությունն ստեղծվում էր Հայաստանում զարգացող ազգային գրականությունից ինչ-որ չափով կտրված: Սակայն այդ դժվարությունը հաղթահարելի էր, որովհետև կար ազգային գրականության հարուստ ավանդույթը: Այդ ընթացքում անվանի գրողները խրախուսում էին երիտասարդներին, սակայն միշտ չէր, որ հետևում էին կոնկրետ գրական գործընթացին: Որոշ բանաստեղծներ թարմություն ասելով հասկանում էին ավանդական ձևերի մերժում և ամեն մի նորաձևության որդեգրում: Ոմանք չէին կարողանում հեռու մնալ գրքայնությունից, որ կենսաճանաչողության պակասի հետևանք էր: Նրանց երկերում քիչ էր զգացվում հայրենի Արցախի շունչը, նրա քաղաքացիների հուզաշխարհը, բնության բույրը: Միակ ելքն այն էր, որ անդրադառնային մեր դասականներին, ժամանակակից վարպետներին, բարձրացնեին իրենց մտավոր պատրաստակամությունը:

1960-ական թթ. համապատկերի վրա ուղենշային մի խորհուրդ էր Պարույր Սևակի «Այո՛, մաքրություն ամենից առաջ» հոդվածը: Սևակը ժխտում է մտքի զգացումի աղքատությունը, հույզի և խոհի ճղճիմությունը բանաստեղծության մեջ: Դիմելով երիտասարդներին՝ մեծ պոետը գրում է. «Շատ վաղուց են բանաստեղծին նմանեցրել զանգի: Միայն ավելացնեն, որ այդ զանգը լեզվակ չունի, եթե այդ լեզվակը հավուր պատշաճությունն է կամ պատեհապաշտությունը, պատվերը և ոչ թե հոգու տուրքը, օրացույցի պահանջը և ոչ թե դարաշրջանի հրամանը: Այդ զանգը զնգում է ժամանակի հովերից և ոչ թե օրերի քանոց: Այդ զանգը զնգում է ժողովրդի շնչից և ոչ թե ինչ-որ խմբակի գոռում-գոչումից: Այդ զանգը զնգում է, երբ արգելում են զնգալ, և լռում է, երբ հրահանգվում է զնգալ: Այդ զանգը օդի մեջ կախված, ոչնչով չպաշտպանված, ծյան և անծրևի ենթակա՝ չի ժանգապատվում, որովհետև երեսապատված է... մաքրությամբ»<sup>[2]</sup>:

Սևակն ընդգծում է, որ առանց այդ մաքրության չի եղել ու չի կարող լինել մարդկային հոգու և ոգու այն մարմնավորումը, որ արվեստ է կոչվում:

Անդրադառնալով պոետական հռետորականությանը՝ Պ. Սևակն ընդունում է մաքուր հռետորականությունը, որովհետև հռետորականությունն էլ պոեզիայի երակներից մեկն է, միայն թե բանաստեղծն ունենա պատկերավոր մտածողություն: Սևակը լուրջ ուշադրություն է դարձնում բանաստեղծի ինքնուրույնությանը: «Ճշմարիտ բանաստեղծության տերը,- գրում է նա,- պիտի ճանաչվի անստորագիր, ինչպես որ իսկական երգչի ձայնը ճանաչում ենք՝ առանց ռադիոհաղորդավարի օգնության էլ»[3]:

1960-70-ական թթ. երևան եկան նորագույն շրջանի հայ պոեզիայի զարգացման նոր նախադրյալներ: Առկա էր բանարվեստի հին օրենքները նորոգելու ձգտումը, ժամանակն իմաստավորելու կարևորության զգացումը: Դրանք էլ հենց գրողների առջև դնում էին լուրջ խնդիրներ: Մշակվում էր ժամանակի բանարվեստի հանգանակը, փորձեր էին արվում նախանշել գեղարվեստական շարժման ուղղվածությունը: Հենց այդ խնդիրների ֆոնի վրա էլ անվանի գրականագետներն ու գրողները քննարկում էին նաև Արցախում ապրող և ստեղծագործող գրողների առանձին գրքերը, բանաստեղծական շարքերը: Ականավոր գրող Մկրտիչ Արմենը, գրախոսելով Վլադիմիր Աբրահամյանի «Սարի շուշաններ» և Սերո Աբրահամյանի «Միջօրե» ժողովածուները, ընդգծում է. «Պոետները երբեմն լինում են լավ, բայց միանման, կամ, ընդհակառակը, լինում են տարբեր, բայց այդ տարբերության մեջ մեկը լավ է, մյուսը՝ վատ: Ուրեմն, մեզ հարկավոր չեն միանման լավ պոետներ և ոչ էլ իրարից տարբեր պոետներ, որտեղ բոլորը չէ, որ լավ են»[4]: Ինչպես տեսնում ենք, Սկ. Արմենը պահանջում էր լավ ու տարբեր բանաստեղծների առկայությունը: Անվանի գրողը, նշելով այդ բանաստեղծների նոր գրքերի առավելություններն ու թերությունները, պահանջում էր խոսքի ինքնուրույնություն:

Պոետական արվեստի հիմնախնդիրը հուզում էր նաև Սևակ Արզումանյանին: Նա նշում է. «Պարտադիր չէ, որ բանաստեղծությունը միշտ «փայլի» մանրամասների նրբությամբ ու այդ նրբությունների միջոցով արտահայտվող ճշմարտացիությամբ: Առավել էականը բանաստեղծության ընդհանուր, ամբողջական փայլի ու փիլիսոփայական ճշմարտացիությունն է, մարդկային այն ճշմարտությունը, որ ստուգված է կյանքի փորձով և օգնում է կյանքում բարու, գեղեցիկի հաստատմանը»[5]:

Արցախում ստեղծվող հայ գրականության ընթացքը մշտապես հետաքրքրել են գրականագետներ Սողոմոն Սողոմոնյանին, Վազգեն Մնացականյանին, Կիմ Աղաբեկյանին, Արշալույս Բաբայանին, Սերգեյ Աթաբեկյանին, Դավիթ Փասապարյանին, որոնք, ընդհանրության մեջ բնութագրելով տարբեր թեմաներով գրված գործերը, նշում էին նաև այն թերությունները, որ հատուկ էին ժամանակակից հայ պոեզիային: Նրանք խորհուրդ էին տալիս գրողներին անդրադառնալ կարևոր ու արդիական հիմնախնդիրներին, թարմացնել ստեղծագործական կենսական նյութը, բարձրացնել խոսքի գեղարվեստական որակը: Այդ դեպքում ավելի մեծ կլինի խոսքի հնչեղությունն ու ներգործման ուժը:

Այդպես՝ քայլ առ քայլ, բավականին շոշոփելի դարձան երիտասարդ բանաստեղծների ձեռքբերումները: Քննադատությունը ողջունեց նրանց, տարբեր առիթներով ասաց իր խոսքը՝ համադրելով դրվատանքն ու օգտավետ դիտողությունը: Այդ առումով հետաքրքիր է Շահեն Օհանջանյանի «Նա աշխարհին բան ունի ասելու» գրախոսությունը Վարդան Հակոբյանի «Մայրանում է լույսը» գրքի վերաբերյալ: Բազմավաստակ բանասերը նկատել էր Վ. Հակոբյանի խոսքի թարմությունը և նշել. «Հակոբյանը բանաստեղծություն չի սարքում: Նրա բոլոր գործերը՝ թույլ, թե ուժեղ, նորմալ ծնունդ են, սեփական մարմին, սեփական շնչառություն»[6]: Նա, գնահատելով Վ. Հակոբյանի

երգերը, որպես մարդու ցավերին սատար, տառապանքի նեցուկ, հավատի լուսե շաղախ, վերհիշում է չարենցյան պատգամը՝ ժամանակի շունչը դառնալու հրամայականը: Նա խորհուրդ է տալիս երիտասարդներին բանաստեղծություն չդարձնել չապրած մտքերը, սառն զգացումները, բռնազբոս դատողությունները: Հարկավոր է զգույշ լինել ինքնակրկնությունից, ասված մտքերը շուռումուռ տալուց, հեշտով գայթակղվելուց:

Այս ժամանակահատվածում երիտասարդ գրողների մուտքի և առանձին ժողովածուների մասին գրախոսություններով հանդես էին գալիս ԱրՊՀ մանկավարժ-բանասերները: Հարկ է նշել Բ.գ.թ. Գուրգեն Բաղդասարյանի, Լենա Գրիգորյանի, Անահիտ Աթայանի, Սիլվա Մինասյանի, Զինաիդա Բալայանի, Հովիկ Մուսայեյանի ելույթները: Այն օրերին երիտասարդ բանաստեղծ Արկադի Թովմասյանի «Ցայգայույս» առաջին ժողովածուի մասին հետաքրքիր խոսք է ասել Լենա Գրիգորյանը, իսկ Անահիտ Աթայանի գրախոսությունը տողերիս հեղինակի «Լեռների երգը» ժողովածուի մասին էր: Երիտասարդ բանաստեղծների առաջնեկների վերաբերյալ իր ուսանելի խորհուրդներն էր տալիս Սիլվա Մինասյանը: Ինչ վերաբերում է ինձ, կարող եմ ընդգծել, որ ստեղծագործական իմ աշխատանքին հավասարապես զուգակցել եմ գրականագետի իմ հետքադրությունները՝ տպագրելով գրախոսություններ և ուսումնասիրություններ մեր գրական ընտանիքի անդամների ժողովածուների մասին՝ ուշադրության կենտրոնում ունենալով բոլորին հուզող գրական կյանքի ընթացքը: Առաջին ընդհանրացնող խոսքս, որ տպագրվել է 1991-ին, եղել է Վ. Հակոբյանի քնարերգության մասին՝ «Ցավի և սիրո պոեզիա» խորագրով: Եվ այսօր գոհունակությամբ կարող եմ նշել, որ իմ բանաստեղծական տասնյակ ժողովածուների մոտ գրականագիտական աշխատություններիս թիվը ևս խրախուսելի է և անհրաժեշտ:

Տարիների ընթացքում մեր գրական օջախի ներկայացուցիչների երկերն ուսումնասիրելու շնորհիվ կարող եմ հաստատել, որ անհատի պաշտամունքի քննադատությունից հետո, թե՛ մինչև 1988թ. և թե՛ արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, ինչպես նաև անկախության շրջանում Արցախում ապրող և ստեղծագործող բանաստեղծները կատարել են գրական նկատելի ու աստվածահաճո հունձք: Ստեղծվել է բազմերանգ պոեզիա, որը կարելի է դիտարկել ու գնահատել հետևյալ թեմատիկ բաժանումներով. «Տազնապի և հույսի հայրենապատում», «Սիրո ցավն ու հմայքը», «Բնության և խոհի խորհուրդը», «Հաղթանակի հրձվանքը՝ խաղաղության ծարավ», «Պոեզիան մարտական դիրքերում», «Պատմության հրամայականը», «Մանուկների աշխարհում»: Դիտարկումն ու արժեքավորումը կատարելով մայր Հայաստանում տեղի ունեցող գրական-ստեղծագործական խմորումների և նվաճումների համապատկերի վրա՝ կարող ենք ընդգծել, որ որպես աստվածաշնորհ արվեստագետներ իրենց առաքելությունը նվիրումով ու պատասխանատվությամբ են կատարել Բ. Զանյանը, Գ. Գաբրիելյանը, Հր. Բեգլարյանը: Շարունակում են ստեղծագործել Ա.Հոհաննիսյանը, Ս.Խանյանը, Ն.Ավագյանը և այլք: Հայ պոեզիայի զարգացման ընթացքին իրենց տաղանդն են նվիրում միջին սերունդը՝ հանձին Վ. Հակոբյանի, Ա. Թովմասյանի, Դ. Միքայելյանի: Նրանց շարունակում են Ռ.Եսայանը, Ն.Գասպարյանը, Հ.Ալեքսանյանը, Ժ.Բեգլարյանը, Ա.Արսենին, Լ.Հակոբյանը և ուրիշներ:

Այսօր մեր գրական ընտանիքը՝ բաղկացած ավագ, միջին և երիտասարդ սերունդներից, եռանդով մասնակցում է Արցախում ստեղծվող պոեզիայի հարստացմանը: Խրախուսելի և ուրախալի է, որ ավագ և միջին սերնդի մոտ ստեղծագործում են այնպիսի թարմ ուժեր, որպիսիք են՝ Տաթև Սողոմոնյանը, Գագիկ Բեգլարյանը, Դավիթ Շիրինյանը, Վիտալի Պետրոսյանը, Ալիսա Բաղդասարյանը, Սոնա Համբարձումյանը: Անունների վերոնշյալ թվարկումները կարող են ոմանց տարակուսել, սակայն կցանկա-

նայի ընդգծել համաշխարհային պոեզիայի պատմությունից ծնված մի համոզմունք: Գրականության պատմության ստեղծմանը մասնակցում են Աստծո կողմից շատ թե քիչ արարելու կարողություն ստացած գրողները: Բոլորը միևնույն մակարդակի լինել չեն կարող, բայց բոլորն էլ իրենց ուժերի ներածին չափ մասնակցում են գեղարվեստական խոսքի շերտավորմանը, ուստի չպետք է մոռանալ գրական ընթացքի խիստ ու հակասական գրված և չգրված օրենքները՝ առնչված անընդհատ որոնումների ու գտնումների անհրաժեշտությանը: Բոլորն են որոնում, բայց բոլորը չէ, որ գտնում են այն, ինչով կարող են նախ հարստացնել ազգայինը և ապա ազգայինը տանել դեպի համամարդկային ասպարեզ: Լյս ճշմարտությունը շատ թե քիչ վերաբերում է նաև մեր գրական ընտանիքին, որը 1988-ին ստեղծեց ինքուրույն գրական օջախ՝ ԼՂՀ Գրողների միություն անունով, որն իրավասու է կազմակերպել գրողների համագումարներ, այլենումներ՝ արած-դրածը քննարկելու, գնահատելու և նոր դասեր առնելու միտումով:

Լյստեղ կարևոր ենք համարում նշել ԼՂՀ Գրողների միության «Արցախ» ամսագրի դերը: Լյն դարձավ մի նոր ամբիոն, որտեղից իրենց տեսական – քննադատական խոսքն ասացին հայ նշանավոր գրականագետները: Նրանց ուշադրության կենտրոնում գրականության ընթացքն էր համեմված գնահատման բարձր չափանիշներով ուսանելի խորհուրդներով: Ակադեմիկոսներ Ս. Սարիսյանը, Ս. Արզումանյանը, գրաքննադատներ Կ. Աղաբեկյանը, Ս. Աթաբեկյանը, Ա. Ահիսյանը և ուրիշ անվանի քննադատներ հանդես եկան իրենց գրախոսություններով և ընդհանրացնող աշխատանքներով:

Ս. Սարիսյանը թե՛ «Արցախ» ամսագրում և թե՛ «Եղիցի լույս» թերթում հանդես եկավ «Արցախը պիտի խոսի», «Արցախի լեզունը», «Բանաստեղծությունը, որի համար ծնվել է նարդը», «Ուրվագծեր ետադարձ հայացքով», «Բանաստեղծության գիտությունը. Բանաստեղծի հայտնությունը» հոդվածներով: Արցախյան շարժման ծանր օրերին նա գրել է. «1917-ին՝ հայ ժողովրդի ամենաողբերգական մի թվականի Հովհաննես Թումանյանը մարգարեաբար գրում էր. «Թե Հայաստանը պետք է խոսի, և պետք է խոսի էնքան լուրջ ու զգաստ, ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողովուրդների մեջ, այլևս էնքան հաստատուն ու բաց ճակատով կարող է խոսել մի ժողովուրդ, որ ապրել է մարդկային լավագույն ձգտումներով և ամեն ինչ տվել է ու կտա ազատ կյանքի համար: Անվանափոխելով հանձարեղ բանաստեղծի խոսքերը՝ կարող ենք ասել, որ Արցախը դեռ պիտի խոսի ու պիտի խոսի նախալեզվից սերվող այն բարբառով, որի հնչյուններում անթեղված է մեր պատմության բիրյիական հուշը: Եվ արդեն ազգային –ազատագրական մաքառման երկունքը, որ ձգտում է դեպի մեր արիական ոգու հաղթանակը, կիմաստավորվի մի նոր հոգեոր վերածննդով, որի նախերգանքը լսելի է Արցախյան արդի հրապարակախոսությունում, բանաստեղծական խոհերում»[7]:

Եվ պոեզիան զինվորագրվեց ազատագրական պայքարին: Արցախում ապրող եվ ստեղծագործող գրողները ընթերցողի սեղանին դրեցին ուշադրության արժանի ժողովածուներ:

Լյդ են վկայում Կ. Հակոբյանի «Արցախա ծուխ», «Ամարասի գանգերը», «Մոսե» գրքերը, Գ.Գաբրիելյանի մարտական երգերի շարքը, «Մեր Գագույան», «Անդրանիկ», «Մուսա լեռան...երկու որդին», «Ողջակիզված կյանք» չափածո ակնարկները, Հ.Բեգլարյանի «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ», «Արցախն Ավարայր», Ն. Ավագյանի «Հասուն իմ հասկ», Ա. Հովհաննիսյանի «Ավանդապատում», Ս.Խանյանի «Արցախյան դողանքներ», Ն.Գասպարյանի «Հավատ Արցախի», Հ. Ալեքսանյանի «Կենսադաշտ» և այլ ընտրանիներ, ինչպես նաև Դ. Միքայելյանի քնարական երգերը՝ նվիրված մեր քաջագուն նահատակների հիշատակին:

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Արցախյան պատերազմին զինվորագրվեց նաև մեր ժողովրդի պատմական-հերոսական անցյալը: Լույս տեսան Կ. Հակոբյանի «Մետրոպ Մաշտոցն Ամարասում», «Տաճարն աստծո», Հ.Բեգլարյանի «Խաչենաբերդ», Ս.Խանյանի «Արցախի արծիվը», Ն.Ավագյանի «Արտաշես», «Արտավազդ», «Արշակ Բ», «Պասպ», «Աշոտ Երկաթ» պոեմները: Նշված բոլոր գործերում մեր ժողովրդի հերոսական անցյալը գեղարվեստական պատկերների ինքնատիպ հյուսվածքով ծառայեց ներկային՝ հանուն ապագայի: Ընդհանրության մեջ 20-րդ դարի երկրորդ կեսին Արցախում ստեղծված հայ պոեզիան արժանի է ամենալուրջ ուսումնասիրության, որովհետև գաղափարա-գեղարվեստական առանձնահատկություններով այն որպես ամբողջական հայ գրականության անբաժանելի մաս, կանգնած է հայ պոեզիայի մարտական դիրքերում:

Մեզնից յուրաքանչյուրը, խոսելով մեր ազգային դարավոր մշակույթի մասին, միշտ էլ ներքին հպարտության զգացումով շեշտում է հազարամյակների ընթացքում ստեղծված մեր հարուստ, բարձրարվեստ գրականության գոյությունը, իսկ երբ կոնկրետանում ենք բանաստեղծական աշխարհի աստղաբույլերի շուրջ, ընդգծում ենք Տիեզերական եկեղեցու 36-րդ վարդապետ Գրիգոր Նարեկացու (10-րդ դար), հսկա Ներսես Շնորհալու (12-րդ դար), Վերածնության շրջանի դյուցազն Նահապետ Քուչակի (16-րդ դար), Լուսավորության դարաշրջանի հանձար, աշխարհալեզու Սայաթ Նովայի (18-րդ դար) անունները: Ակնածանքով առաջին աստղերի շարքն ենք դասում հայ նոր գրականության փարոս Խաչատուր Աբովյանին, հայոց քերթության Արարատ Հովհաննես Թումանյանին, Ցեղին սրտի մորմոք ու կանչ Դանիել Վարուժանին, մահվան տեսիլների խոսքաշեն քրմապետ Սիամանթոյին, սիրո և կարոտի հայրենաշունչ սիրտ՝ Վահան Տերյանին, Արագածի աստղագետ, վարպետաց Վարպետ Ավետիք Իսահակյանին, պոետական Ծիր-Կաթինի անմահ ճամփորդ Եղիշե Չարենցին: Եվ ապա ձեռք ենք մեկնում Հայոց դանթեականի հանձարեղ խենթին՝ Հովհաննես Շիրազին, նորագույն շրջանի հայ պոեզիայի արևաշող հորիզոնների երգահան Պարույր Սևակին, հազարալեզու ծաղիկների գիտակ ու թարգման Համո Սահյանին, անկեզ մորենիների ու հայոց Ծուխ-ծխանների խնկարկու Վահագն Դավթյանին:

Հայոց հանձարածին մայրերի նվիրումը, սակայն, դադար չի առնում: Այսօր հայ պոեզիան նոր փեշերի ծփանքով դեպի գալիք հորիզոններ են մղում Ռազմիկ Դավոյանը, Հենրիկ Էդոյանը, Արտեմ Հարությունյանը, Արևշատ Ավագյանը, Դավիթ Հովհաննեսյը, Հրաչյա Թամրազյանը, Հակոբ Մովսեսը, Էվվարդ Միլիտոնյանը, Հրաչյա Սարուխանը և այն նորերը, ովքեր հավաստի հայտ են ներկայացրել պոետական արվեստի բնագավառում:

Բարձր գնահատականի արժանացած, ժողովրդի կողմից ընդունված այս աստղաբույլի մոտ կարող ենք ներկայացնել մեր գրական ընտանիքի այն բանաստեղծներին, ովքեր ձգտել ու ձգտում են արդարացնելու հայոց բարձրարվեստ պոեզիայի աշխարհում իրենց գրաված տեղն ու դերը:

20-րդ դարի երկրորդ կեսի հայ պոեզիայի անդաստանում մենք կարող ենք մատնացույց անել ավագ սերնդի ստեղծած արցախապատկեր-հայաշունչ պոեզիան՝ ստեղծված մեր դասական քնարերգության ավանդույթների օրինաչափություններով, բայց բավականին թարմ ու նորօրյա, որի առջևից քայլում է Գուրգեն Գաբրիելյանը՝ «Դարաբաղի հորովելը» շուրթերին, Արցախի հրաշամանուկների ժպիտները հայացքում, գալիքի հանդեպ նրանց հավատով ջերմացած:

Կարող ենք մատնացույց անել միջին սերնդի շքախումբը՝ Վարդան Հակոբյանի գլխավորությամբ՝ որպես տաղանդավոր ու բեղմնավոր բանաստեղծ, որի կողքին իրենց միջին սերնդի ներկայացուցիչներ են համարում ազատ բանաստեղծության ջա-

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016**

տագովներ Ռոբերտ Եսայանը, Հրանտ Ալեքսանյանը, Ժաննա Բեգլարյանը և ինքնաժխտումի խիզախ մարտիկ Նորել Գասպարյանը:

Մեծ սպասելիքներ ունենք երրորդ (համարենք երիտասարդ) սերնդի ներկայացուցիչներ Տաթևիկ Սողոմոնյանից, Վիտալի Պետրոսյանից, Ալիսա Բաղդասարյանից, Սոնա Համբարձումյանից: Միաժամանակ հավատում ենք, որ կգան նորերը, և չեն կարող չգալ: Պիտի գան ազատ և անկախ ապրող, հերոս-նահատակների արյան գնով հառնած Արցախի մայրական կանչով, մեր հաղթանակը շահած հերոսական բանակի երգասան հրանոթների որոտների հրավերով, 1915-ի հայոց ցեղասպանության անմեղ զոհերը դարձած Կոմիտասի երաժշտության սիրով, Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Միամանթոյի, Ռուբեն Սևակի և մյուս նահատակների հրամանով, Մայր Հայաստանի, Արցախի, Սփյուռքի եռամիասնության եռագույնի ներքո, Վանա ծովի ափին, Սասունի և Մուշի հայ ընթերցողների առջև Առանշահիկների Արցախ աշխարհի մարտական ու հոգեպարար նոր պոեզիան ներկայացնելու երազանքով:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Տես «Գրական Աղբյուր» հանդեսի 1963թ. 2-րդ համարը:
2. »Գրական Աղբյուր» հանդես, 1963, թիվ 1, էջ 119:
3. Նույն տեղում, էջ 121:
4. «Գրական Աղբյուր» հանդես, 1964, թիվ 1, էջ 80:
5. «Գրական Աղբյուր» հանդես, 1964, թիվ 6, էջ 90-91:
6. «Գրական Աղբյուր» հանդես, 1977, թիվ 1, էջ 106:
7. Սարինյան Ս., Բանաստեղծի հայտնությունը, Ստեփ., 1998, էջ 3:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

#### **Պոեզիայի զարգացման միտումներն Արցախում Սոկրատ Խանյան**

Սույն հոդվածում ներկայացվում է Արցախում ստեղծվող պոեզիան, որն անցել է բարդ ու դժվարին ճանապարհ՝ սկսած 1920 – ական թթ. սկզբից: Նշվում է պատմական ճակատագրական այն անարդարացի որոշումը, որով բոլշևիկյան ղեկավարները մայր Հայաստանից խլեցին նրա 10- րդ նահանգը հանդիսացող Արցախը ու հանձնեցին Աղբյուր կոչվող հանրապետությանը: Հոդվածում ընդգծվում է, որ, չնայած դժվարություններին, ստեղծել է ուշագրավ պոեզիա՝ ներծծված հայկական ոգով: Ընդգծվում են անկախության շրջանում ստեղծված մարտական ոգին ու բարձր գեղարվեստական առանձնահատկությունները:

РЕЗЮМЕ

Тенденции в развитии поэзии в Арцахе  
Сократ Ханян

**Ключевые слова:** поэзия, Армения, Арцах, Союз писателей СССР, Союз писателей Азербайджана, освободительная борьба, патриотизм, лирика тоски, боевая поэзия, свобода.

В данной статье анализируется создаваемая в Арцахе поэзия, прошедшая сложный и трудный путь с начала 1920 года. Отмечается то историческое несправедливое решение, с помощью которого большевицкие лидеры отобрали у Матери-Армении ее историческую 10-тую губернию и отдали так называемой Азербайджанской Республике. В статье подчеркивается, что, несмотря на имеющиеся трудности, поэты, живущие в Арцахе, создавали интересные поэтические творения, впитавшие армянский дух. Подчеркивается также, что поэзия, созданная в период независимости, имеет боевой дух и особый способ передачи художественной мысли.

SUMMARY

Poetry Development Trends in Artsakh  
Sokrat Khanyan

**Keywords:** poetry, Armenia, Artsakh, the Union of Soviet Writers, the Union of Writers of Azerbaijan, liberation struggle, patriotism, poetry of yearning, combat poetry, freedom.

This article touches upon the Artsakhi poetry that has passed a complicated and difficult way since the beginning of 1920. Due to the unjust historical decision, the Bolshevist leaders separated the 10<sup>th</sup> historical province from Mother–Armenia and gave to the so-called Republic of Azerbaijan. The article emphasizes the idea, that despite the difficulties, poets living in Artsakh could create unique pieces of poetry that absorbed the Armenian spirit. It is also emphasized that poetry during the period of independence is marked by the competitive spirit and has a special way of transmission of artistic ideas.